ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1949 *Общественные науки*

Հ. Վարդանյան

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՆՏՐՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿԱԼԸ 1918—1920 Թ. Թ.

Դաշնակցական մաուզերիստները, ինչպես նաև վրացական մենշևիկներն ու ադրբեջանական մուսավաթականները Ռուսաստանում Սովետական իշխանության հաստատման առաջին օրերից պայքարի դուրս եկան նրա դեմ։

Այդ կոնտրռևոլուցիոն պարտիաներն Անդրկովկասի ժողովուրդների միջև ազգամիջյան կռիվներ ու երկպառակություն բորբոքելով, ձգտում էին ետ պահել բանվորներին ու գյուղացիներին վերահաս ռևոլուցիայից։

Փետրվարյան ռևոլուցիայից հետո, մենշևիկների ու մուսավաթականների հետ միասին, դաշնակցությունը հանդիսանում էր բուրժուազիայի ժամանակավոր իմպերիալիստական կոնտրռևոլուցիոն կառավարության դաշնակիցը՝ աճող պրոլետարական ռեոլուցիայի դեմ կռվելու համար։

1917 թվի Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ. Ռեոլուցիայի հաղթանակից հետո Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ օտարերկրյա իմպերիալիստների թելադրանքով ու աջակցությամբ կատաղի պայքարի ելան Սովետական Ռուսաստանի դեմ։ Նրանք Անդրկովկասը անջատեցին Սովետական Ռուսաստանից և 1917 թվի նոյեմբերի 24-ին կազմակերպեցին Անդրկովկասյան կոմիսարիատ, որը կոնտրռևոլուցիոն ուժերի բլոկ էր՝ ուղղված սովետական կարգերի դեմ։ Այդ առթիվ ընկեր Ստալինը գրում էր. «... Անդրկովկասի ունևոր դասակարգերն ակնբախ տեսան, որ Հոկտեմբերյան ռևոլուցիան և Սովետական իշխանությունը անխուսափելի մահ են բերում նրանց։ Պայքարը Սովետական իշխանության դեմ, այդ պատճառով էլ, դարձավ նրանց համար կյանքի ու մահվան հարց»։[1]

Հնարավորություն չունենալով իրենց ուժերով կասեցնելու բանվորների և գյուղացիների աճող ռեոլուցիոն շարժումները, դաշնակները, մենշևիկներն ու մուսավաթականները դիմեցին Արևմուտքի իմպերիալիստական տերություններին, հայցելով նրանց օգնությունը։

Անդրկովկասյան կոմիսարիատի կազմակերպումից մի քանի ամիս հետո, 1918 թվի փետրվարին, հիմնադրվեց, այսպես կոչված, Անդրկովկասյան սեյմը, որը որոշեց գործարքի մեջ մտնել գերմանական կոալիցիայի հետ, 1918 թվի մարտի 1-ին հաշտության բանակցությունների համաձայնություն տվեց և դրանով իսկ Անդրկովկասի դռները բաց արեց գերմանա-թյուրքական իմպերիալիստների առջև։ Թյուրքիայի հետ բանակցությունները սկսվեցին մարտի 18-ին և տևեցին մինչև ապրիլի 1-ը։ Թյուրքիան՝

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 60։

օգտվելով պատեհ առիթից, վիժեցրեց բանակցությունները և սկսեց կենսագործել իր վաղեմի երազանքը՝ Անդրկովկասի զավթումը, նրա ժողովուրդների, նախ և առաջ, հայ ժողովրդի ստրկացումն ու ֆիզիկական ընաջնջումը։ Դաշնակներն ու մենշևիկները, մուսավաթականների աջակցությամբ փաստորեն դաշնակցեցին Անդրկովկասի ժողովուրդների ոխերիմ թշնամիների՝ թյուրքական և գերմանական ավազակային հորդաների հետ։ Անդրկովկասի ժողովուրդները իրականում ընկան գերմանո-թյուրքական իմպերիալիստների ծանր լծի տակ և ենթարկվեցին անասելի հալածանքների և ֆիզիկական ընաջնջման։

Գերմանական իմպերիալիստները, Կոստանդնուպոլսի վրայով շարժվելով, 1918 թվի մայիսի 28-ին մտան Բաթում, օկուպացրին Վրաստանը և իրենց ձեռքն առան նրա տնտեսական ու քաղաքական կյանքի ամբողջ ղեկավարությունը։ Մերկացնելով Սեյմի կոնտրռևոլուցիոն քաղաքականությունը և Վրաստանի «անկախության» մասին մենշևիկների զառանցանքները, Լենինը գրում էր. «Դուք բոլորդ գիտեք, որ Վրաստանի այդ անկախությունը վերածվեց մաքուր խարեության,— իրականում դա հանդիսանում է Վրաստանի լրիվ գրավումն ու օկուպացիան գերմանական իմպերիալիստների կողմից, մենշևիկների կառավարության և գերմանական սվինների դաշինքը՝ բոլշևիկյան բանվորների ու գյուղացիների դեմ։»[1]

Թյուրքիայի հետ բանակցությունները վերսկսում են Բաթումում՝ 1918 թվի մայիսի 28-ին։ Թյուրքիայի ռազմական մինիստր Էնվեր-փաշան պահանջում է Ալեքսանդրոպոլ—Ջուլֆա երկաթգիծը՝ Պարսկաստանում անգլիացիների դեմ կռվելու պատրվակով։ Մայիսին՝ Էնվեր-փաշայի զորքերը գրավում են Ալեքսանդրոպոլը և շարժվում Էջմիածին ու Լոռի՝ կողոպտելով ու ֆիզիկական ոչնչացման ենթարկելով հայ աշխատավոր ժողովրդին։

Թյուրքիան պահանջում էր նաև Անդրկովկասի երկաթուղուց օգտվելու ազատ իրավունք և Հայաստանից տերիտորիալ զիջումներ։ Մուսավաթականների օգնությամբ թյուրքական զորքը մտնում է Բաքու՝ բոլշևիկների դեմ կռվելու համար։

Գերմանո-թյուրքական զավթիչների պահանջով Սեյմը մայիսի 26-ին Անդրկովկասյան կառավարությունը հայտարարում է լուծված։ Նույն օրն էլ հայտարարվում է Վրաստանի «անկախությունը»։ Մայիսի 27-ին Ադրբեջանի ազգային խորհուրդը հայտարարում է Ադրբեջանի «անկախությունը» և, վերջապես, մայիսի 28-ին հայ ազգային խորհուրդը «ազատ և անկախ» է հայտարարում Հայաստանը։ Այդ «ազատությունն ու անկախությունը» ֆիկցիա էր։ Հայաստանի դաշնակցական «կառավարությունը» իրականում չուներ ոչ մի ազատություն ու անկախություն, հանդիսանում էր միջազգային իմպերիալիզմի գործակալը, նրա՝ զինակիցը Սովետական Ռուսաստանի և իր երկրի բանվորների ու գյուղացիների դեմ կռվելու համար։

Դաշնակցական ավանտյուրիստները իրենց գոյության առաջին իսկ օրից դաշինքի մեջ մտան Թյուրքիայի հետ, նրա օգնությունը խնդրեցին Հայաստանում բանվորների ու գյուղացիների աճող ռևոլուցիայի դեմ

[1] Լենին, Երկեր, հ. 23, էջ 155։

կռվելու համար։ 1918 թվի հունիսի 4-ին, «անկախ Հայաստանի» դելեգացիան Ալ. Խատիսյանի, Հ. Քաջազնունու և Բարաջանյանի ղեկավարությամբ Բաթումում Թյուրքիայի հետ վարում է բանակցություններ, որի ժամանակ դաշնակցականների առջև ծառացած հարցը հանդիսանում էր Թյուրքիայի օգնությունը՝ բոլշևիկների դեմ միատեղ պայքարելու և Բաքվում հաստատված Սովետական իշխանությունը խեղդելու համար։ Այդ բանակցությունների ընթացքի մասին դելեգացիայի ղեկավար Խատիսյանը Բաթումից Ավ. Ահարոնյանին հաղորդում էր, որ իրենք Թյուրքիայի հետ միասին իրենց վրա են վերցրել «... Բաքուն բոլշևիկներից ազատելու պարտավորությունը...»։[1]

1918 թվի հունիսի 4-ին, հայ ժողովրդի այդ նույն ոխերիմ թշնամիները, Թյուրքիայի պետական խորհրդի նախագահ Խալիլ-բեկի հետ իրենց կնքած հաշտության պայմանագրով օգնություն են խնդրում երկրում «կարգ ու կանոնը» վերականգնելու համար, այսինքն՝ հայ բանվորների ու գյուղացիների ռևոլուցիոն շարժումների և այդ շարժումները ղեկավարող բոլշևիկյան կազմակերպությունների դեմ կռվելու համար։ Հաշտության պայմանագրի 4-րդ կետում գրված էր, որ «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է զենքի ուժով օգնություն հասցնել դաշնակներին և այն դեպքում, երբ վերջիններս խնդրեին այդ»։ Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա դաշնակցական խմբապետների այդ ստորաքարշությունը, հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման այն ստոր քաղաքականությունը, որ նրանք վարում էին հայերի դարավոր թշնամի՝ թյուրքական ռեակցիոներների հետ միասին։

Դաշնակցական կառավարությունը «Հայկական հարցի» լուծումը սպասում էր գերմանական իմպերիալիստներից, որոնց ռազմական շտաբներում մշակվում և թյուրքական վանդալներին էին հանձնվում հայ ժողովրդի բնաջնջման ծրագրերը։ Դաշնակցությունը Համո Օհանջանյանին գործուղում է Բեռլին, որ իր կառավարության անունից խնդրի Գերմանիային, որպեսզի վերջինս իր վրա վերցնի Հայաստանի «պաշտպանությունը»։ Սակայն Գերմանիան Հայաստանի «պաշտպանությունը» հանձնարարում է Ավստրիային, իսկ վերջինս հրաժարվում է դրանից այն պատճառով, որ Հայաստանը աղքատիկ երկիր էր, իսկ «Հայկական հարցը» կնճռոտ կոնֆլիկտներով լի մի հարց։

Համո Օհանջանյանը Բեռլինի բանակցությունների մասին իր կառավարությանը հաղորդում էր. «Կոմս Ա. Բրոդինը ասել է մերոնց, որ չի ծածկի մեզանից, որ Գերմանիան է առաջարկել Ավստրիային իր վրա վերցնել Հայաստանի հովանավորությունը, բայց այդ հարցի քննության ժամանակ ավստրիական կառավարության մեջ տիրում է այն տեսակետը, որ բոլորովին կարիք չկա Գովկասը բաժանել մասերի, ազդեցության շրջանների, մանավանդ, որ Գերմանիային ընկնում է ավելի թեթև և ոչ պատասխանատու և միաժամանակ ավելի շահավետ, հարուստ արտադրության առարկաներով երկիր՝ Վրաստանը, իսկ Ավստրիային՝ ավելի կնճռոտ, բարդություններով (ազգամիջյան թշնամություն և այլն) և միաժամանակ ավելի աղքատ արտադրության առարկաներով մի երկիր՝ Հայաստանը»։[2]

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. արխիվ, ֆոնդ 200, գործ 11, թերթ 56։

Իրողությունն այն է, որ ոչ Գերմանիան և ոչ էլ Ավստրիան հայկական հարցի լուծման այլ միջոց չէին գտնում, քան այն, ինչ կատարում էր Թյուրքիան, այսինքն բնաջնջել հայ ժողովրդին։

Գերմանական իմպերիալիստների թիկնապահությամբ թյուրքական իմպերիալիստները հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը, նրա կուլտուրայի ու գիտության ոչնչացումը դարձրել էին իրենց գործողության ծրագիրը։ Թյուրքիան այդ կատարում էր ոչ միայն տաճկահայության, այլև բուն Հայաստանի ազգաբնակչության նկատմամբ։ Գրավելով Ալեքսանդրոպոլը, Ղարաքիլիսան, Լոռին, անցնելով Երևանից Ջուլֆա՝ թյուրքական զորքերը ֆիզիկապես ոչնչացնում էին հայերին, բռնաբարում էին կանանց ու աղջիկներին, սպանում երեխաներին ու ծերունիներին, թալանում ու կողոպտում էին հայ աշխատավոր ժողովրդի վերջին ունեցվածքը, այրում ու մոխրակույտի էին վերածում գյուղացիների տները։

Այս բոլորից հետո հայ ժողովրդի անունից խոսող դաշնակցական խմբապետները Թյուրքիայի հետ պայմանագիր էին կնքում և նրա օգնությունն էին խնդրում երկրում «կարգ ու կանոնը» վերականգնելու համար, գերմանական իմպերիալիզմին օգնության էին կանչում Հայաստանի պաշտպանության համար։ Իրականում դաշնակցական բանդիտները գերմանո-թյուրքական վայրագ իմպերիալիստներին օգնության էին կանչում բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն շարժումները ճնշելու, բոլշևիկներին ջախջախելու, Բաքվում հաստատված Սովետական իշխանությունը տապալելու համար։

* * *

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմում գերմանական կոալիցիայի պարտություններից հետո դաշնակցությունը դիմեց ստորաքարշության քաղաքականության՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ամերիկայի իմպերիալիստական գիշատիչների դիվանագիտության և ռուսական կոնտրռևոլյուցիոն գեներալների՝ Կոլչակի, Դենիկինի, Կալեդինի և մյուսների հանդեպ։ Անտանտի իմպերիալիստական տերությունները և ռուս սպիտակ գվարդիականները սկսեցին շողոքորթել դաշնակցական մաուզերիստներին, նորից հրապարակ քաշելով «Հայկական հարցը», որպեսզի օգտագործեն և իրոք օգտագործեցին դաշնակցական բանդաներին Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների աճող ու զարգացող ռևոլյուցիոն շարժումների դեմ։

Միջազգային իմպերիալիզմի գործակալներ դաշնակները և նրանց՝ «ազատ ու անկախ» Հայաստանի սկզբունքների վրա կանգնած հայ սպեցիֆիկները հանդիսանում էին Անտանտի պետությունների դաշնակիցներն ու հլու հնազանդ ծառաները՝ Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու գործում։

1918—20 թվականներին պետական իշխանության գլուխ կանգնելով՝ դաշնակները կռվում էին սոցիալիստական ռևոլյուցիայի դեմ, որը Ռուսաստանի կենտրոնից արագորեն տարածվում էր դեպի ծայրամասային երկրները, դեպի Անդրկովկաս։ Հոկտեմբերյան Ռևոլյուցիան ամրապնդեց ծայրամասերի բանվորների ու գյուղացիների դաշինքը Ռուսաստանի բանվորների ու գյու-

դացիների հետ, ոգեշնչելով նրանց սոցիալիզմի անխուսափելի հավատով։ Այլ կերպ էլ լինել չէր կարող։ «Պրոլետարական Ռուսաստանի և իմպերիալիստական Անտանտայի միջև բորբոքվող մահացու պայքարի պայմաններում ծայրամասերի համար,—գրում էր ընկեր Ստալինը,—հնարավոր է միայն երկու ելք.

Կա՛մ Ռուսաստանի հետ միասին, և այն ժամանակ — ծայրամասերի աշխատավոր մասսաների ազատագրումն իմպերիալիստական ճնշումից.

Կա՛մ Անտանտի հետ միասին, և այն ժամանակ—անխուսափելի իմպերիալիստական լուծ։

Երրորդ ելք չկա։

Այսպես կոչված անկախ Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և մյուսների այսպես կոչված անկախությունը լոկ մի խաբուսիկ երևութականություն է, որը քողարկում է այդ, թող ներվի ասել, պետությունների կատարյալ կախումը իմպերիալիստների այս կամ այն խմբից»։[1]

Հետևապես «Անկախ Հայաստանի» գոյությունը ֆիկցիա էր, այն գոյություն չուներ, կախյալ էր անգլիական իմպերիալիստներից, շարժվում էր նրանց թելադրանքով և կատարում էր նրանց կամքը։ Անգլիական իմպերիալիստներն իրենց հովանավորության տակ էին վերցրել Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի ամբողջ ղեկավարությունը։ 1919 թվի մարտի 23-ին, Անդրկովկասի բրիտանական հրամանատարը դաշնակցական Հայաստանի «կառավարությանը» ուղարկում էր հետևյալ ծածկագիրը.—

«Անդրկովկասի բրիտանական զորքերի հրամանատար — գեներալը տեղեկանում է վստահելի աղբյուրից, որ մի բոլշևիկյան կոմիտե է հաստատվել Ալեքսանդրոպոլում, և որոշ ժամանակից ի վեր շատ ակտիվ պրոպագանդա է տանում բանվորական դասակարգի, բանակի և երկաթուղային ծառայողների մեջ։

Այս հարցն արդեն հանձնված է Ալեքսանդրոպոլի հայկական ոստիկանության ուշադրությանը, որն իր հերթին տեղեկացրել է հայկական կառավարությանը խնդրի առարկա եղող կոմիտեի գոյության մասին։

Հրամանատար-գեներալը ուրախ պիտի լինի, եթե Ձերդ վսեմությունը հիմա անմիջական քայլեր անի՝ ճնշելու վերև հիշատակված բոլշևիկյան կոմիտեն»։[2]

Այս փաստն ակնառու կերպով ցույց է տալիս, թե ինչպես դաշնակցական նացիոնալիստները Հայաստանը ենթարկել էին անգլիական իմպերիալիստների քմահաճույքներին և նրանց օգնությամբ ու թելադրանքով կռվում էին Հայաստանում Սովետական իշխանության հաստատման բոլշևիկյան փորձերի դեմ։ Հայկական Դաշնակցական կառավարությունը, որը կազմվեց 1918 թվին,—գրում էր «Պրավդա»-ն,—իրենից ներկայացնում էր նույնպիսի մի խաղալիք իմպերիալիստների ձեռքին, ինչպես որ մենշևիկյան Վրաստանը և մուսավաթական Ադրբեջանը։

Դաշնակցական կոնտրռևոլուցիոն պարտիան և Անդրկովկասի մյուս

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4-րդ, էջ 391։

[2] «Նորք», № 4—5, էջ 419, 1924 թվ։

կոնտրռևոլուցիոն պարտիաները, անգլիական իմպերիալիստների հրահանգով և դեպի սովետական կարգերը տածած խորը ատելությամբ, սերտ հարաբերություններ հաստատեցին Կոլչակի և Դենիկինի սպիտակ գվարդիական «կառավարություններից» հետ։ Ինչպես հայտնի է, Անտանտի ստրատեգիական պլանն էր իր զորքերը տեղական կոնտրռևոլուցիոն ուժերի հետ միասին Սովետական Ռուսաստանի դեմ հարձակման նետել միաժամանակ երեք ուղղությամբ՝ Հյուսիսից — անգլիացիների, ֆրանսիացիների միացյալ ուժերով, Արևելքից՝ չեխոսլովակյան և սպիտակ գվարդիական ուժերը՝ ճապոնացիների և ամերիկացիների աջակցությամբ, և հարավից՝ Անտանտայի ուժերը, ամրապնդված Դենիկինի և Պետլյուրայի օգնությամբ։

Սիբիրում հաստատվեց Կոլչակի ռազմամիապետական դիկտատուրան, որը վերականգնեց դարական ռեակցիոն կարգերը։ Նա առաջադրեց «միասնական, անբաժանելի Ռուսաստանի» լոզունգը։ «Օմսկի կառավարության» հետ սերտ հարաբերությունների մեջ մտավ դաշնակցական «անկախ» Հայաստանի կառավարությունը՝ Սովետական Ռուսաստանի դեմ կռվելու համար։

Դաշնակցական կառավարությունը ռազմական դաշինք կնքեց Կոլչակի հետ և իր պաշտոնական ներկայացուցչությունն ունեցավ Կոլչակի «կառավարության» կից։

Դաշնակցական կառավարությունը Կոլչակի արշավանքի շրջանում դիվանագիտական և ռազմական հարաբերությունների մեջ է մտնում Դոնի կոնտրռևոլուցիայի հետ, Դենիկինյան կամավորական բանակի հետ՝ Սովետական իշխանության դեմ կռվելու համար։ Այդ մասին 1919 թ. հունիսի 3-ին Ս. Մ. Կիրովը Լենինին և Ստալինին հայտնում էր, որ «Հայկական կառավարությունը, ունենալով Հայաստանի լայնացման հսկայական պլան, և օգտվելով դաշնակիցների ու Դենիկինի համակրանքից ու պաշտպանությունից, ամեն կերպ պաշտպանում է նրանց. իսկ Դենիկինի հետ գաղտնի դաշինքի մեջ է գտնվում»։[1]

Դենիկինը խոստանում էր իր վրա վերցնել «Հայկական հարցի» լուծումը, պայմանով, որ դաշնակցական կառավարությունը զինակցեր նրա հետ՝ Սովետական Ռուսաստանի դեմ կռվելու համար։ Դաշնակցական կառավարության անունից Մ. Արզումանյանը Դենիկինին հաղորդում է. «Դեկտեմբերի 19-ին ես կարեոր խոսակցություն ունեցա պարոն Տետրուվեի հետ (կամավոր բանակի ներկայացուցիչը Կովկասում), որի ժամանակ նա հայտնեց ինձ գեներալ Դենիկինի Եկաթերինոդարում գտնվող շրջանների հայացքը «Հայկական հարցի» վերաբերյալ։[2]

Չնայած Անտանտի տերություններն ամեն հնարավոր օգնում էին ռուս սպիտակ «կառավարություններին», ինչպես նաև Անդրկովկասի նացիոնալիստական կոնտրռևոլուցիոն կառավարություններին՝ բոլշևիկների և Սովետական իշխանության դեմ կռվելու համար, բայց միաժամանակ դեմ էին, որ Ռուսաստանը տիրապետող լինի Անդրկովկասում։ Չնայած իրենց ամպագորգող հայտարարություններին՝ «Միացյալ և անբաժան Ռուսաստանի մասին», սպիտակ գվարդիական կոնտրռևոլուցիոն «կառավարություններ-

[1] Ս. Մ. Կիրով, Հոդվածներ, ճառեր և փաստաթղթեր, 1-ին հ., էջ 143, 1936 թ.։
[2] Հայկական ՍՍՌ Պետ. արխիվ, ֆոնդ 200, գործ 125, թերթ 65։

ըրդ անգլո-ֆրանսիական իմպերիալիստներին էին վաճառում Ռուսաստանը, միայն թե նրանց օգնությամբ ու աջակցությամբ տապալեին բանվորների ու գյուղացիների իշխանությունը։ Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների ճնշման ներքո կատարված կոնտրռևոլուցիոն ուժերի միավորման և բոլշևիկների դեմ կոմբինացած արշավանք կազմակերպելու մասին՝ Եկատերինոդարից 1919 թ. հունվարի 11-ին, հայկական բանակի ներկայացուցիչը Դաշնակցական Հայաստանի կառավարությանը հաղորդում է. «1. Տեղի ունեցավ ռազմաճակատի միացում. հարավում բոլշևիկների դեմ գործող բոլոր զորքերը մտան գեներալ Դենիկինի հրամանատարության տակ (Կրասնովը շատ էր հակառակում, բայց անգլիացիները ստիպեցին)։ 2. Տեղի ունեցավ ազդեցության շրջանների բաժանում. ամբողջ Կովկասը Թյուրքեստանով և հեռուն՝ անգլիացիները,— Ուկրաինան Ղրիմով՝ ֆրանսիացիները։ 3. Գեներալ Դենիկինը կապ հաստատեց ադմիրալ Կոլչակինի հետ և նրանք փոխանակեցին հեռագրերը։[1]

Դենիկինյան կամավորական բանակի շտաբը 1918 թվի հոկտեմբերի 8-ին, դիմում է դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրությանը և պահանջում է միանալ կոնտրռևոլուցիոն ուժերին՝ բոլշևիկների դեմ։

Դենիկինի «կառավարությունը» իր պաշտոնական ներկայացուցիչն է նշանակում Հայաստանում։ Այդ ներկայացուցիչը գնդապետ Զինկևիչն էր, որը 1919 թվի ամրանը էջմիածին՝ Գևորգ կաթողիկոսին այցելության է գալիս՝ նպատակ ունենալով օգնության կանչել վանականներին՝ ժողովրդին ոտքի հանելու, նրանց գիտակցությունը կրոնով վարակելու, բոլշևիկների դեմ կռվի հանելու համար։

Դենիկինյան բանակի շտաբը 1919 թվի սեպտեմբերի 24-ին դաշնակցական կառավարությանը հայտնում է, որ «Գլխավոր շտաբի գնդապետ Զինկևիչը Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գլխավոր հրամանատարի կողմից գործուղված է Հայաստան, որպես հայկական կառավարության կից ռազմական ներկայացուցիչ... Հիշյալ ներկայացուցչին ուղեկցում են երկու սպա և երեք զինվոր։

Հայտնելով այդ մասին, խնդրում եմ չմերժել շտապ կարգով տեղեկացնելու ինձ կառավարության համաձայնությունը գնդապետ Զինկևիչին նշանակելու մասին և բոնադրավել նրա համար 6—7 սենյակից բաղկացած մի բնակարան։[2] Զինկևիչի վկայականի տակ ստորագրել է գեներալ-լեյտենանտ Լուկոմսկին։

Այսպիսով, դաշնակցական Հայաստանի կառավարությունը Կոլչակի, Դենիկինի և մյուս սպիտակ գվարդիականների դաշնակիցն էր թե Ռուսաստանի և թե իր սեփական բանվորների և գյուղացիների ռևոլուցիոն շարժումների դեմ մղվող կռվում։

1919 թվի հոկտեմբերի 10-ին, դաշնակցական կառավարության ներկայացուցիչ Գ. Ս. Զամոյևը Օմսկից իր կառավարությանը տեղեկացնում էր, որ ինքը տեսակցություն է ունեցել Կոլչակի հետ և նրա կողմից ջերմ ընդունելություն է գտել։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. արխիվ, ֆոնդ 200, գործ 125, էջ 91։
[2] Հայկական ՍՍՌ Պետ. արխիվ, ֆոնդ 200, գործ 135, թերթ 55։

1919 թվի մարտի 6-ին, դենիկինյան կամավոր բանակի ներկայացուցիչը լինում է Երևանում և մարտի 8-ին տեղի է ունենում սպիտակ գվարդիականների ներկայացուցիչների և դաշնակցական կառավարության համատեղ դաղտնի խորհրդակցությունը, կնքվում է դաղտնի համաձայնագիրը, որտեղ ասված էր, որ դաշնակցական կառավարությունը ենթադրում է, որ Հայաստանի մասնակցությունը բոլշևիկների դեմ մղվող պայքարին կարող է արտահայտվել հետևյալ ձևով.

Ակտիվ պայքար բոլշևիկների դեմ համառուսաստանյան ֆրոնտում, պայքար բոլշևիզմի դեմ երկրի ներսում, ռազմական հանդերձանքի փոխանակություն և այլն։[1]

Կոլչակի ջախջախումից հետո Անտանտի իմպերիալիստները իրենց հույսը դրին Դենիկինի վրա՝ նրան հռչակելով Ռուսաստանի Դերագույն կառավարիչ։ Սկսվեց Անտանտի երկրորդ արշավանքը Սովետական Ռուսաստանի դեմ։ Այս արշավանքին մասնակցում էին 14 իմպերիալիստական տերություններ՝ Չերչիլի ղեկավարությամբ, այդ թվում՝ դաշնակները, մուսավաթականները և վրացական մենշևիկները։

1920 թ. մարտի 7-ին, դաշնակցական կառավարության Նովորոսիյսկի ներկայացուցիչն իր կառավարության ներկայացրած զեկուցագրում Դենիկինի հետ սահմանված փոխհարաբերությունների մասին հայտնում է «... իսկ ինչ վերաբերում է սպառազինության առարկաներին, ապա միսիային հաջողվեց այդ տեսակի օգնություն ստանալ. վերջերս ուղարկված է մեկ միլիոն երկու հարյուր հազար փամփուշտ և տաս հազար շրապնել... Իսկ ներկա մոմենտում բոլոր միջոցները ձեռք են առել, որ մեզ լայն օգնություն ցույց տրվի այնքան ստիպողական ու մեզ այնքան հարկավոր միջոցներով. նախապես ստացել եմ Գլխավոր հրամանատարի համաձայնությունը։ Տալով դրան իր համաձայնությունը՝ գեներալ Դենիկինը բացատրեց ինձ, որ Բաքումում կազմակերպվում է կամավորական բանակի սպառազինության առարկաների պահեստ և որ մենք պետք է հոգանք մեզ բաց թողնվող պարտիաների առաքման եղանակների և ուղիների ընտրության մասին։ Նշանակում է, հարկավոր է հովանավորող դաշնակիցների աջակցությունը, առնվազն այն, որ նրանց կողմից խոչընդոտներ չլիներ։»[2]

Դենիկինյան սպիտակ գվարդիականների կողմից դաշնակցական մաուզերիստներին ցույց տրված օգնությունը՝ բոլշևիկների դեմ կռվելու համար, մեծ ուրախություն ու ոգևորություն առաջ բերեց դաշնակների շրջանում։ Խատիսյանը Փարիզի խաղաղության կոնֆերանսի հայ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին 1919 թ. սեպտեմբերի 22-ին հաղորդում է. «Հայտնում եմ Ձեզ տեղեկություն... որ Դենիկինից ստացել ենք երեք միլիոն փամփուշտ։»[3]

Այսպիսով, վերև մատնանշված փաստերն ակնառու կերպով ցույց են տալիս, որ դաշնակցությունը 1918—20 թվականներին հանդիսանում էր ռուս սպիտակ գեներալների գործակալը՝ Ռուսաստանում հաստատված Սովետական իշխանության, Անդրկովկասում և Հայաստանում ծավալվող ու զարգացող բանվորների և գյուղացիների ռևոլուցիոն շարժումների դեմ մղվող պայքարում։

[1] Հայկական ՍՍՌ Պետ. արխիվ, ֆոնդ 3, գործ 344, թերթ 8։
[2] Հայկական ՍՍՌ Պետ. արխիվ, ֆոնդ 66, գործ 865, թերթ 1։
[3] Հայկական ՍՍՌ Պետ. արխիվ, ֆոնդ 200, գործ 253, թերթ 190։